**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02**
**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 28.03.2017թ.-ի N 39 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

10.04.2017թ. ժամը 12:00

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 28.03.2017թ.-ի N 39 - Լ հրամանի հիման վրա «Իրան-Հայաստան 400կՎ 3-րդ էլեկտրահաղորդման օդային գիծ և համապատասխան ենթակայան» կառուցման ծրագրի շրջանակներում «Հայանտառ» և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ների տարածքներում, հենարանների տեղերի և հենարանների մոտեցման ճանապարհների կառուցման նպատակով անտառահատման աշխատանքների մատուցման պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ «ԲԷՑ-ՊԸԾՁԲ-17/11»

Մասնակցում էին հանձնաժողովի՝

**Նախագահ**

| | |
|---|---|
| Ալիսա Բաղդասարյան | ֆինանսատնտեսագիտական և մատակարարման հարցերով տնօրեն |

**Անդամներ**

| | |
|---|---|
| Միշա Բաղրամյան | գլխավոր տնօրենի խորհրդական |
| Հարություն Գևորգյան | մատակարարման բաժնի պետի տեղակալ |
| Սմբատ Արշակյան | ՎԾԻ և ՎՎ պետի տեղակալ |

**Քարտուղար**

| | |
|---|---|
| Ռոմեո Ալբերտյան | Գնումների համակարգող |

## I. Հայտի բացման մասին

---

(Ալիսա Բաղդասարյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.
ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

- «Էներգո ցանց մոնտաժ» ՍՊԸ-ն՝ 10.04.2017թ., ժամը 14:30-ին, իրավաբանական հասցե ք. Երևան, Դավիթ Մալյան փող. Շ. 41, հեռ. 094 99 77 55

1.1 Մասնակցի հայտ պարունակող ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.2 Մասնակցի գնային առաջարկն է.

1-ին չափաբաժնի համար-10730800 ՀՀ դրամ

2-րդ չափաբաժնի համար-2022000 ՀՀդրամ

1.3 Մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1 Մասնակիցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկները ճիշտ են:

2.3 Գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էներգո ցանց մոնտաժ» ՍՊԸ-ն -ին:

2.4 Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

2.5 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

2.6 Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակցությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Ալիսա Բաղդասարյան

Հարություն Գևորգյան

Միշա Բաղրամյան

Սմբատ Արշակյան

Ռուբեն Ալբերտյան